ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ***Հետադարձ կապի ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա:***

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Ավետիսյան

Ղեկավար՝ Ա. Գափոյան

Գավառ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ներածություն

2) Գրական ակնարկ

3) Փորձառության հետազոտություն

4) Եզրակացություն

5) Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակյալ կրթության հիմքում ընկած է արդյունավետ դասավանդումը: Վերջինս մի շարք կարևոր բաղադրիչների ամբողջություն է ուսուցչի՝ մասնագիտական և մանկավարժական մոտեցումների մշտական վերանայում և կատարելագործում, ուսուցանման նպատակների ու խնդիրների ձևակերպում, պլանավորում, դասարանում բարենպաստ մթնոլորտի ձևավորում, մոտիվացիայի և ներգրավվածության ապահովում, սովորողներին իրենց ուսումնառության վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում: Արդյունավետ հետադարձ կապը սովորողին առաջ մղող դրական ազդեցություն ունի: Հետադարձ կապից է կախված ուսումնառության արդյունավետությունը:

Հետազոտության նպատակն է հետադարձ կապի տարբեր ձևերի կիրառման միջոցով բարելավել սովորողների առաջադիմությունը:

‹‹Հետադարձ կապ›› (feedback) տերմինն առաջին անգամ կիրառվել է կիբեռնետիկայի հիմնադիր Նորբերտ Վիններին կողմից: Այն ձևակերպվել է որպես ավտոմատ կառավարման համակարգ, որը որոշակի ճշգրտությամբ կատարում է տրվող կամայական հրամանը:

Հոգեբանության մեջ հետադարձ կապը դիտարկվում է որպես մի անձից մեկ այլ անձին հաղորդագրություն այն մասին, թե ինչպես է նա ընդունվում այդ մարդու կողմից:

Հետադարձ կապը կարող է լինել դրական և բացասական, ակնթարթային և ուշացած, արտաքին և ներքին, համակարգված և տարերային, խիստ և ոչ խիստ, մակերեսային և խորը, միակողմանի և ծավալուն, արդյունավետ և ոչ արդյունավետ և այլն:

Բարձրորակ հետադարձ կապը կատարված գործողության արդյունքի տեղեկույթ է՝ տրված ինքն իրեն, այլ մարդու կամ մարդկանց խմբի այնպիսի ձևով և հաջորդականությամբ, որում այն առավելագույնս կօգտագործվի հետագա կատարվող գործընթացի որակյալ առաջընթացի և արդյունավետության բարձրացման համար: Ի հակադրություն բարձրորակ և դրական հետադարձ կապի՝ բացասական հետադարձ կապը կարող է աշակերտի մոտ առաջացնել ագրեսիվություն, աշխատունակության և

աշխատելու ցանկության անկում, որն էլ իր հերթին կբերի ուսումնառության որակի իջեցման:

Հետադարձ կապն օգնելու է սովորողին ունենալ պատկերացում իր ձեռքբերումների և անելիքների մասին, իսկ ուսուցչին կողմնորոշելու է ուսուցանմանն ուղղված իր հետագա քայլերը հստակեցնելուն:

Ուսուցչի դիտարկումների արդյունքում ձևակեպված հետադարձ կապը պետք է լինի դրական, հուսադրող, առաջ մղող, միաժամանակ ուղղված լինի աշակերտների սխալներն ու թյուրըմբռնումները ընդգծելուն և դրանք շտկելու ուղիները տեսնելուն:

Հետազոտական աշխատանքի իրականացմամբ իմ առջև դրված գլխավոր նպապակն էր ուսումնասիրել է հետադարձ կապի ազդեցությունը, սովորողի սովորողի առաջադիմության վրա, բացահայտել հետադարձ կապի ազդեցությունը և իրականացնել դրա գնահատում տարբեր տեսանկյուններից:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ըստ Ջ.Հեթթիի և Հ.Թիմփերլիի հետադարձ կապը հայեցակարգվում է որպես տեղեկույթ՝ տրված մեկի (օրինակ՝ ուսուցիչ, հասակակից, ծնող, սեփական անձ, փորձառություն) կողմից մարդու կատարածի կամ ընկալածի վերաբերյալ: Հետադարձ կապը կատարածի հետևանք է: Հետադարձ կապն ուսման և հաջողության վրա ունի հզոր ազդեցություն: Այդ ազդեցությունը կարող է լինել կա՛մ դրական, կա՛մ բացասական: Հետադարձ կապը շատ ազդեցիկ է, երբ այն վերաբերվում է սխալ մեկնաբանություններին և ոչ թե ընկալման լրիվ բացակայությանը: Հետադարձ կապի հիմնական նպատակը ներկա ընկալումների, կատարման և նպատակների միջև տարբերությունների նվազեցումն է: Ուսուցիչների և աշակերտների կիրառած ռազմավարությունները այս տարբերությունը նվազեցնելու համար կարող են շատ թե քիչ արդյունավետ լինել կրթությունը բարելավելու հարցում, ուստի կարևոր է հասկանալ այն պայմանները, որոնք տարբեր արդյունքներ են առաջացնում: Արդյունավետ հետադարձ կապը պետք է պատասխանի երեք հիմնական հարցի՝ տրված ուսուցչի և կամ աշակերտի կողմից՝ ու՞ր եմ գնում (որո՞նք են նպատակները), ինչպե՞ս եմ գնում (ի՞նչ առաջընթաց կա դեպի նպատակը), ո՞րն է հաջորդը (ի՞նչ գործողություններ պետք է նախաձեռնել ավելի մեծ առաջընթաց ունենալու համար): Նրանք նաև առանձնացնում են հետադարձ կապի կիզակետը՝ չորս մակարդակներ. առաջին՝ հետադարձ կապ առաջադրանքի կամ արդյունքի մասին (ԱՀԿ), երկրորդ՝ հետադարձ կապը կարող է նպատակաուղղված լինել այն գործընթացին, որը սովորաբար արդյունք է ստեղծում կամ ամբողջացնում է առաջադրանքը, այսինքն առաջադրանքի մասին հետադարձ կապ (ՄՀԿ), երրորդ՝ աշակերտներին տրվող հետադարձ կապը կարող է կենտրոնանալ ինքնակառավարման մակարդակի վրա՝ ներառյալ ինքնագնահատման և ինքնավստահության ավելի կարևոր հմտությունները առաջադրանքով զբաղվելու համար (ԻՀԿ), չորրորդ՝ հետադարձ կապը կարող է անձնական լինել, այն կարող է ուղղված լինել ‹‹անձին›› և հաճախ կապ չունի առաջադրանքի կատարման հետ (ԵՀԿ): Նրանք պնդում են, որ ԵՀԿ-ն ամենաքիչ արդյունավետությունն ունի, ԻՀԿ-ն և ՄՀԿ-ն արդյունավետ են առաջադրանքը խորապես մշակելու և յուրացնելու առումով, իսկ ԱՀԿ-ն արդյունավետ է այն

ժամանակ, երբ առաջադրանքի մասին տեղեկույթը օգտակար է լինում ռազմավարության մշակումը կատարելագործելու և ինքնակառավարումը մեծացնելու համար: Նրանք եզրակացնում են, որ հետադարձ կապի ազդեցության աստիճանը բարձր է այն դեպքերում, երբ սովորողը տեղեկություններ է ստանում առաջադրանքի և այն ավելի արդյունավետ կատարելու մասին, ավելի ցածր է թիրախավորման վրա շեշտը դրված միջամտությունների կիրառման դեպքում և շատ ավելի ցածր՝ գովասանքի, պարգևների ու պատժի կիրառման դեպքում: Հեթթի, Ջ. և Թիմփերլի, Հ., (2007) մարտ, հտ77. No1, 81-112:

Ըստ Բլեքի և Ուիլյամի՝ հետադարձ կապը ուսումնառությանը նպաստող գնահատման կարևոր գործիքներից է: Նրանք գտնում են, որ նույնիսկ այն դեպքում, երբ հետադարձ կապը փաստացիորեն արդյունավետ է, դրա ազդեցությունը ոչ բոլոր դեպքերում է հնարավոր շարունակաբար պահպանել: Եթե հետադարձ կապի արդյունքում շահադրդումը (մոտիվացիան) մեծանում է, ապա համապատասխանաբար ավելի շատ ջանքեր են պահանջվում այն պահպանելու համար (իմ կարծիքով և՛ ուսուցչից, և՛ սովորողից): Այն դեպքերում, երբ հետադարձ կապը կենտրոնանում է առաջադրանքների վրա՝ այսպիսով շեշտադրելով ուսումնառության գործնական նպատակները, այն դրանով իսկ խոչընդոտում է խորքային ուսումնառությանը: Նրանք ուսումնասիրությունների արդյունքում գալիս են եզրահանգման, ըստ որի միջամտությունները պակաս արդյունավետ են, եթե դրանք ուշադրությունը բևեռում են առաջադրանքից բացի որևէ այլ բանի վրա, (օրինակ՝ ուսումնառողի անձի) և առավել արդյունավետ են, երբ ուշադրությունը բևեռվում է առաջադրանքի կատարման շահադրդման կամ առաջադրանքների կատարման միջոցով ուսումնառության վրա: Նրանք նաև այս կարծիքն են արտահայտում. որպեսզի գնահատումը կառուցողական լինի, հետադարձ կապից ստացված տեղեկությունը պետք է օգտագործվի, այսինքն հետադարձ կապի նկատմամբ տարբերակված մոտեցումներն ընկած են արդյունավետ ուսուցման հիմքում: Նրանց հոդվածում խոսվում է նաև ուսումնական հետադարձ կապի չորս տեսակների մասին(Ա և Բ՝ գնահատողական, Գ և Դ ՝ նկարագրողական բնույթի).

1) Ա տեսակի հետադարձ կապ, որը պարգևատրում կամ պատժում է ուսանողներին իրենց (լավ կամ վատ) աշխատանքի համար, օրինակ՝ լավ աշխատանքի դեպքում թույլ են տալիս ճաշի շուտ դուրս գալ կամ

հանձնարարությունները ժամանակին չավարտելու դեպքում սպառնում են դուրս չթողնել (պարգևատրող և պատժիչ):

2) Բ տեսակի հետադարձ կապ, որը ցուցադրում է ուսուցչի գոհունակության աստիճանը, օրինակ՝ ‹‹Շատ գոհ եմ քեզանից›› կամ ‹‹Քեզանից շատ հիասթափված եմ›› (գոհացուցիչ և ոչ գոհացուցիչ) (իմ կարծիքով այսօր հետադարձ կապի այս ձևը բավական շատ է կիրառվում ուսուցիչների կողմից):

3) Գ տեսակի հետադարձ կապը կենտրոնանում է ուսուցչի կողմից սահմանված հաջողության չափանիշներին աշխատանքի համապատասխանության վրա՝ սկսած այդ համապատասխանության աստիճանից, օրինակ՝ ‹‹Այս մասը չափազանց լավ ես բացատրել›› (ձեռքբերման բացատրություն), մինչև այն քայլերը, որոնք սովորողը պետք է կատարի աշխատանքը բարելավելու համար, օրինակ՝ ‹‹Ուզում եմ ,որ այս բոլոր վարժությունների վրայով անցնես և հավասարության նշաններ դնես յուրաքանչյուրի համար›› (բարելավման բացատրություն): Գ տեսակի հետադարձ կապին բնորոշ հատկությունն այն է, որ այն կենտրոնանում է աշխատանքի գաղափարի վրա ՝ որպես արդյունքի։

4) Դ տեսակի հետադարձ կապը կարևորում է աշխատանքի գործընթացային կողմը,որտեղ ուսուցիչն ավելի շատ համակարգողի դեր է կատարում, քան գնահատողի (բարելավման բացատրություն ,առաջխաղացման նախագծում):

‹‹Ձևավորող գնահատման տեսության զարգացում›› հոդվածում ևս Բլեքը և Ուիլյամը կրկին անդրադառնում են հետադարձ կապին: Այստեղ ուսումնասիրությունները կապված են այն խնդրի հետ, թե ուսուցիչներն ինչպես կարող են շրջանակի մեջ դնել և համակարգել ցանկացած պատասխանին տրվող իրենց հետադարձ կապը։ Սա քննարկում են երկու մակարդակում՝ ռազմավարական մակարդակ (ինչպես է ուսուցչի առավել լայն մանկավարժական կողմնորոշումն ազդում հետադարձ կապի ձևավորման վրա) և մարտավարական մակարդակ (պատասխանների տեսակների և դասարանային խոսույթի ուսումնասիրություններից քաղված դասերի դիտարկումներ):

Իր ելույթներից մեկում Ուիլյամը նշում է հետևյալը. «Եթե հետադարձ կապը ուղղված է անձին՝ այն ցածր արդյունավետ է և կարող է ունենալ նաև բացասական ազդեցություն։ Հետադարձ կապն էֆեկտիվ է, եթե ուսուցչի կարծիքը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես սովորողները բարելավեն (ինչպե՞ս գնալ) իրենց

ձեռքբերումները: Սովորողը մեր հետադարձ կապի շնորհիվ պետք է հասկանա, որ ունակությունները կարելի է զարգացնել, դրանք ֆիքսված չեն»:

Ջեֆֆ Փեթթին իր ‹‹Ժամանակակից ուսուցում›› գրքում (էջ 85-89) անդրադառնում է հետադարձ կապի բազմաթիվ հարցերի, որոնցից ես կանդրադառնամ գովեստին և քննադատությանը: Ըստ հեղինակի սովորողները չեն սիրում, երբ իրենց անտեսում են, նրանց խթանում է գովեստը, եթե նրանց հաջողությունն ընդունվում և գնահատվում է, հետևաբար հիմնավորված և կառուցողական քննադատությունը նրանք ավելի շուտ կհամարեն օգտակար, քան ապամոտիվացնող: Իսկ ինչպե՞ս օգնել սովորողներին, որ մեր քննադատությունները դրական ընդունեն: Փեթթին մեզ խորհուրդ է տալիս հետևյալը. փորձառու ուսուցիչները հիմնականում այնպես են քննադատում իրենց աշակերտներին, որ քննադատությունը հնչում է որպես խորհուրդ, և բերում է բազմաթիվ օրինակներ. ուսուցիչը պետք է համադրի գովեստն ու քննադատությունը, վերջինս առաջարկի դրական ձևով՝ կողմնորոշելով դեպի աշխատանքի հետագա բարելավման: ‹‹Մեդալ›› և ‹‹Անելիք›› - սովորողների համար կարևոր է իրենց աշխատանքի մասին դրական գնահատականը և տեղեկությունն այն մասին, թե հատկապես ինչն է լավ այդ աշխատանքում (մեդալ): Նրանց անհրաժեշտ է վստահ լինել, որ աշխատանքը ճիշտ է կատարվում մասամբ նրա համար, որ շարունակեն աշխատանքը, և հատկապես նրա համար, որ հաճախ իրենք այն ինքնուրույն չեն կարող ճշգրիտ գնահատել: ‹‹Մեդալները›› հաճախ նկարագրում են աշխատանքի դրական ասպեկտը, նաև կարող են ընդգրկել ընտրված մոտեցման դրական գնահատականը, օրինակ՝ նրա պլանավորումը կամ գործադրված ջանքերը: ‹‹Անելիք››-սովորողներն անհրաժեշտ է ինֆորմացիա այն մասին, թե ի՞նչը և ինչպե՞ս կարելի է բարելավել իրենց աշխատանքում: Այդ ինֆորմացիան ևս պետք է լինի դրական և ուղղորդի դեպի աշխատանքի բարելավում ապագայում: Այդ դեպքում այն կդիտվի ոչ որպես քննադատություն, այլ որպես խորհուրդ և ավելի քիչ կդիպչի ինքնասիրությանը: Այդպիսի քննադատությունը ցույց կտա բարելավման ուղիները, ոչ թե ուղղակի կմատնանշի սխալները: ‹‹Անելիքը›› լրացնում է բացը սովորողի ներկայումս գտնվելու մակարդակի և այն մակարդակի միջև, որին ձգտում է նա հասնել: «Մեդալն» ու «անելիքը» կապված են այն նպատակների հետ, որոնց ձգտում է հասնել սովորողը, ինչպես նաև աշխատանքի գնահատման չափանիշների հետ: Եթե սովորողները չգիտեն ուր գնալ, դժվար թե հասնեն վերջնակետին: Այդ պատճառով էլ

ուսուցիչները պետք է հստակ ձևակերպեն առաջադրանքները՝ օգտագործելով հասկանալի բառեր: Հետևաբար սովորողների համար օգտակար է նրանց ծանոթացնել գնահատման չափանիշներին, որպեսզի նրանք հստակ տեսնեն, թե ինչ պետք է անել բարձր միավոր ստանալու համար: «Մեդալները»՝ հասած նպատակներն են, իսկ «անելիքները»՝ նպատակներ են, որոնց դեռ պետք է հասնել: Հնարավոր չէ հետադարձ կապի ժամանակ միշտ բոլորին «մեդալներ», «անելիքներ» կամ հստակ հանձնարարություններ տալ, ըստ Փեթթի դա հոգ չէ, բայց անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր սովորող ստանա դրանք որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Սովորողի աչքի ընկնող աշխատանքներում Փեթթին խորհուրդ է տալիս ընդգրկել և՛ «մեդալներ», և՛«անելիքներ»:

Փեթթին ուսումնառությունը դիտարկում է որպես երկկողմանի գործընթաց (4. էջ 56-57): Ուսումնառության գործընթացը դատապարտված է ձախողման, եթե հետևյալ երկու պայմանները ապահովված չեն.

- աշակերտի համար՝ հարցեր տալու հնարավորություն
- ուսուցչի համար՝ հնարավորություն պարզելու, թե ինչպես է աշակերտը յուրացնում նյութը:

Եթե այնպես լիներ, որ ուսումնառությունը իրենից միակողմանի գործընթաց ներկայացներ, ապա բոլորը գերազանց կսովորեին գրքեր կարդալով և նայելով, իսկ ուսուցիչների կարիք չէր լինի: Առանց հետադարձ կապի ուսուցիչը չի կարող հասկանալ ուսումնառություն տեղի ունեցել է, թե ոչ:

Ուսումնառության մեջ շփումը ենթադրում է, որ լավ կազմակերպված աշխատանքը բերում է հետևյալ շղթային. ի՞նչ եմ ուզում հաղորդել սովորողներին - ի՞նչ եմ ասում – նրանք ի՞նչ են լսում – նրանք ի՞նչ են հասկանում:

Ինչպես «փչացած հեռախոս» խաղում հաղորդագրությունը կարող է աղավաղվել վերոնշյալ շղթայի ցանկացած փուլում: Ստացված հաղորդագրությունը միշտ չէ, որ համապատասխանում է ուղարկվածին և նրան ինչ մենք սովորեցնում ենք, և այն ինչ մենք սովորեցնում ենք միշտ չէ, որ համապատասխանում է նրան, ինչ արդյունքում սովորում են: Այդ պատճառով է հետադարձ կապը շատ կարևոր:

Թոմաս Գորդոնի «Արդյունավետ դասավանդողի կուրս, ինչպես բացահայտել դպրոցականների մեջ ամենալավը» գրքում ամերիկացի հայտնի հոգեբանը խորհուրդներ է տալիս այն ուսուցիչներին, ովքեր ձգտում են բարձրացնել իրենց

աշխատանքի արդյունավետությունը։ Այստեղ նա կարևորում է միջավայրի տարբեր գործոնների ազդեցությունն ուսուցման արդյունքի վրա, բայց ամենակարևոր գործոն համարում է ուսուցիչների և աշակերտների միջև յուրահատուկ հարաբերությունների հաստատումը: Որպես հարաբերությունների հիմք նա վերցնում է ուսուցչի խոսելու կարողությունը, քանի որ խոսակցությունը կարող է քանդել մարդկանց հարաբերությունները կամ, ընդհակառակը, ամրացնել դրանք։ Այդպես է նաև դասարանում. խոսակցությունը կարող է կա՛մ հեռացնել ուսուցչին աշակերտից, կա՛մ՝ նրանց էլ ավելի մտերմացնել։ Նա կարևորում է այն, թե որքանով է ուսուցիչը կարողանում գովեստի խոսքեր ասել սովորողին, ինչպես է դա ընդունվում և օգտագործվում սովորողի կողմից (այն կարող է ճիշտ չընկալվել սովորողի կողմից և ունենալ հակառակ՝ բացասական ազդեցություն, ուղղվել հենց ուսուցչի դեմ): Սովորողներին պատրաստի պատասխաններ տրամադրելու փոխարեն Գորդոնն առաջարկում է «ակտիվ լսելու» հմտություն զարգացնել («ակտիվ լսել»՝ հետադարձ կապ ըստ Գորդոնի) (էջ 127-128), ինչի շնորհիվ հնարավոր է դառնում հարցերի միջոցով վեր հանել սովորողի խնդիրները, և նրան մղել դրա լուծմանը՝ իր սեփական հետաքրքրություններին և ոճին համապատասխան: Այսպիսի հետադարձ կապի շնորհիվ սովորողը զգում է, որ իր մտքերն ու հույզերը հարգանքի են արժանանում, հասկացվում և ընդունվում են։ Այն նպաստում է զրույցի շարունակմանը, մեղմացնում է հույզերի թեժացմանը և բերում է կատարսիսի (բարձր ներդաշնակության զգացում, որն ունի դաստիարակող նշանակություն): Ակտիվ լսելը նպաստում է խորքային խնդիրների վերհանմանը, որոնց լուծման պատասխանատվությունը կրում է սովորողը։ Ըստ Գորդոնի՝ ուսուցիչները շատ լավ են հասկանում բացասական գնահատականների ուժը,բայց նրանց հաճախ շոկի է ենթարկում այն,որ ,ի հակադրություն տարածված կարծիքի, գովեստը նույնպես միշտ չէ,որ օգտակար է սովորողների համար և հաճախ կարող է ունենալ բացասական հետևանք։ Դրական գնահատականը, որը չի համընկնում սովորողի սեփական նկարագրի (իմիջի) հետ, կարող է նրա մոտ առաջացնել գրգռվածություն։

Ն.Պ.Լոկալովը իր ‹‹Школьная неуспеваемость: причины, психокоррекция, психопрофилактика›› գրքում (1, էջ 10) ուսումնառությունը դիտարկում է որպես ակտիվ փոխազդեցության գործընթաց սովորողի և սովորեցնողի միջև, որի արդյունքում ձևավորվում են որոշակի գիտելիքներ և հմտություններ սեփական ակտիվության

հիման վրա, ուսուցչի և աշակերտի փոխադարձ գործունեություն, որը ապահովում է դպրոցականների գիտելիքների յուրացում և գիտելիքներ ձեռք բերելու եղանակների տիրապետում:

Կ. Ա. Բեսսոնովն իր ‹‹Հետադարձ կապը սովորողի և ուսուցչի մանկավարժական փոխազդեցության մեջ›› հոդվածում նշում է, որ ուսումնառության գործընթացը ցանկացած փուլում ենթադրում է անմիջական փոխազդեցություն ուսուցչի և սովորողի միջև: Մարդկանց միջև փոխազդեցության մեխանիզմի կարգավորումն անհնար է առանց կայուն հետադարձ կապի առկայության: Դա հանդիսանում է հիմնական բաղադրիչը, միջանձնային շփումների հաջողության գրավականը՝ սովորողի ու ուսուցանողի միջև կառուցողական փոխազդեցությունների համար: Յուրաքնչյուր սովորող պետք է զգա, որ ինքը կտրված չէ դասի ընթացքում տեղի ունեցողից, քննարկվող խնդրից դուրս թողնված չէ, այլ ընդգրկված է քննարկման մեջ և իր կարծիքը ևս կարևոր է: Ըստ նրա հետադարձ կապի՝ փոխազդեցության ու վերահսկողության խնդիրը ուսուցչի և սովորողի միջև գալիս է դեռ անտիկ շրջանի առաջին դպրոցներից, որոնցում ուսուցման հիմնական մեթոդներն էին ուսուցիչների և աշակերտների զրույցները, երկխոսություններն ու քննարկումները: Հին հույն փիլիսոփա Սոկրատեսն առաջիններից մեկն էր, ով սկսեց կիրառել գործընթացների կազմակերպման և կառավարման մեթոդներ: Նա անհատական երկխոսությունների, հրապարակային քննարկումների չպարտադրող ձևով, բազմաթիվ անմիջական հարցերի օգնությամբ կարող էր ոչ միայն վերահսկել քննարկվող խնդրի ընթացքը, այլ ուղղել պահանջվող ուղղությամբ իր աշակերտների գործունեությունը: Հետևաբար, ուսուցման ողջ գործընթացը՝ «անգիտությունից դեպի գիտելիքի ուղին» կարող է ազատորեն վերահսկվել ուսուցչի կողմից հետադարձ կապով: Ստանալով իր աշակերտներից անհրաժեշտ տեղեկություններ՝ Սոկրատեսը կարող է զգալիորեն վերակառուցել ուսումնառության ուղին՝ կախված յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակություններից: Այսպես հեղինակն անդրադառնում է ուսուցիչ – աշակերտ փոխհարաբերություններին անտիկ շրջանից մինչև մեր օրերը: Միջնադարյան դաս-դասարանային համակարգը սկսում է ուսուցչից ավելի շատ ջանքեր պահանջել լսարանը կառավարելու և կազմակերպելու համար: Հետադարձ կապի տրամադրումը դառնում է ոչ միայն առաջադիմության կառավարման միջոց, այլև ավելի կարևոր՝ սովորողի ճանաչողական ակտիվության ղեկավարման միջոց:

Բեսսոնովն անդրադառնում է նաև ժամանակակից մոտեցումներին՝ եզրակացնելով, որ ուսումնառության հաջողությունը կախված է ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների սեփական գործունեության ճիշտ գնահատականից: Հետադարձ կապը դիտվում է որպես սովորողի ամբողջական գործունեության վրա փոխազդեցություն, և ոչ թե նրա ուսումնական պրոցեսի առանձին քայլերի և գործողությունների շրջանակ: Մանկավարժության տեսանկյունից հետադարձ կապը ներկայացնում է որպես ուսումնական գործընթացի վերահսկման անբաժան մաս ուսումնական պլանի յուրացման ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ փուլերում:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով գրական աշխատությունները պարզ դարձավ, որ հետադարձ կապը այն կարևորագույն գործիքներից է , որը մեծ զդեցություն ունի սովորողների ուսումնառության և հատկապես առաջադիմության վրա: Հենվելով այս փաստերի վրա փորձել եմ որոշ եղանակներ կիրառել սեփական գործունեության ընթացքում և կատարել եզրահանգումներ:

Ինչպես արդեն պարզ դարձավ, ուսուցման գործընթացում կիրառվող հետադարձ կապի էությունը կայանում է ներկայացված թեմայի վերաբերյալ աշակերտների ստացած գիտելիքների, պատկերացումների, գաղափարների վերհանմանը, այլ կերպ ասած հետադարձ կապի կիրառման արդյունքում է ուսուցիչը պարզում որքանով է աշակերտն ընկալել իրեն մատուցված նյութը և որքանով է ընկալել այնպես, ինչպես իրականում անհրաժեշտ է, այսինքն այն բացահայտում է նաև մատուցված նյութի ընկալման համապատասխան աստիճանը:

Սույն հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է հետևողական հետադարձ կապի բազմազան ձևերի ազդեցության արդյունքը մեկ դասարանի համար: Անցկացվել է մի քանի դասեր 10-րդ դասարանում, որոնք ամփոփվել է թեմատիկ գրավոր աշխատանքով: Թեմաների ուսումնասիրության ընթացքում փորձել եմ կիրառել հետադարձ կապի բազմազան ձևեր (գրավոր, բանավոր), առվել շատ ուշադրություն դարձնելով սովորողների ներգրավվածության, այլ ոչ թե նրանց ակադեմիական գիտելիքների յուրացման ու վերարտադրման վրա: Այդ նպատակով տրվել են հիմնականում հայտորոշիչ և ամփոփիչ թեստեր, ինչպես նաև բանավոր զրույցի՝ այսինքն հարցուպատասխանի, տարբեր հարցերի վերհանման միջոցով բանավոր քննարկման և թյուրըմբռնումների բարելավման, գծապատկերների մմիջոցով:

Երկու դասերի ընթացքում տրվել է հայտորոշիչ թեստ, ընդ որուում սկզբում նոր նյութի հազորդումից առաջ՝ հանձնարարված նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքների ստուգման և թյուրըմբռնումների շտկման նպատակով: Ստուգման ժամանակ միայն նշել եմ ճիշտ է կամ սխալ է՝ առանց լրացուցիչ պարզբանումների: արդյունքները

վերլուծել եմ բանավոր՝ նշել առաջադրանքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն տվել ինքնուրույն ուղղել սխալ պատասխանները: Երկրորդ թեստը տրվել է թեմայի քննարկումից անմիջապես հետո, դասի ամփոփման փուլում, ստուգումը կատարվել է նույն սկզբունքով՝ նշվել է ճիշտ է կամ սխալ է, քննարկվել է բանավոր: Այս անգամ արդեն նկատելի է դրական փոփոխություն և բարձր, և ցածր առաջադիմություն ունեցող սովորողների մոտ: Այն սովորողները ովքեր ունեցել են դժվարություններ, թեմայի յուրացման հետ կապված, անցկացվել է անհատական զրույց՝ նրանց ունեցած դժվարություններն ու կարիքները պարզելու, առաջադրանքները սխալ կատարելու պատճառները վեր հանելու և հետագա աշխատանքները մշակելու նպատակով: Կատարել եմ անդրադարձ, տվել եմ բարելավման և առաջ մղող հետադարձ կապ, սխալներ չունեցող աշակերտներին հաձնարարել եմ առավել բարդ խնդիրների լուծում խնդրագրքից և շտեմարանից: Հաջորդ հայտորոշիչ թեստային աշխատանքը տրել է մի քանի դասանյութ ամփոփելու նպատակով, աշխատանքների վրա կատարել եմ նշումներ՝ ցուցումներ, խորհուրդներ (հիմնականում հետադարձ կապի «սենդվիչի» սկզբունքով): Այս դեպքում արդեն սովորողների մեծ մասի մոտ նկատվել է դրական առաջընթաց և մեծ ներգրավվածություն դասապրոցեսին: Յուրաքանչյուր սովորող իրեն հասանելիության սահմանում ունեցել է առաջադիմության աձ: Մյուս երկու դասերի ընթացքում հետադարձ կապը տրամադրվելէ սովորողների կողմից, իհարկե իմ ուղղորդմամբ, ինչն իր հերթին նպաստել է առողջ համագործակցային միջավայրի ձևավորմանը: Յուրաքանչյուր աշխատանքի վերլուծությունից հետո սովորողները նկարել են իրենց թեստերը, որպեսզի հնարավորություն ունենան կրկին դրանց անդրադառնալու: Բարձր առաջադիմություն ունեցող սովորողները անհատական աշխատանք են տարել ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ՝ ունեցած դժվարությունները հաղթահարելու նպատակով:

Վերջում տրվել է ամփոփիչ թեստային աշխատանք, որի արդյունքները մեկ անգամ ևս ապացուցում են, որ տրամադրվող հետադարձ կապի բնույթից կախված սովորողների առաջադիմությունը մեծանում է:

Գրավոր աշխատանքներին տրվող թե՛ բանավոր, թե՛ գրավոր հետադարձ կապերը հիմնականում ունենում են դրական արդյունք: Երբ աշխատանքը կատարվում է անմիջապես թեմայի քննարկումից հետո՝ սխալներն ավելի քիչ են, քան որոշակի ընդհատումից հետո տրվող աշխատանքի դեպքում: Մինչ այս միջամտությունները՝

հետադարձ կապը հիմնականում վերաբերվել է սովորողների սխալ կամ ճիշտ տրված պատասխաններին, գրավոր մեկնաբանությունները գրեթե բացակայել են, ամեն ինչ արվել է բանավոր, սովորողն այլևս հնարավորություն չի ունեցել վերանայելու, շտկելու իր աշխատանքը։ Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է։ Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը։

Հետադարձ կապի կիրառման արդյունքում աշակերտները առավել պատասխանատու են իրենց հանձնարարված դասերի յուրացման համար։ Հետադարձ կապի դրսևորումը զգոն է պահում նաև ուսուցչին, քանի որ վերջինս պարտավորվում է դասը վարել այնպես, որ որպես հետադարձ կապի դրսևորում ստանա միայն դրական և հետաքրքիր արձագանքներ, քանի որ հետադարձ կապը նաև ուսուցչի վարած դասի վերաբերյալ կարծիք է, իսկ երբ այդ կարծիքների հավաքագրման գործընթացն իրականացվում է անանուն, առավել մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը դասը բարձր որակով վարելու մասով։ Հետադարձ կապի կիրառման արդյունքում փոխվում է աշակերտների մոտեցումն ու ընկալումը դասընթացների վերաբերյալ՝ հատկապես երբ կարևորվում է սվորողների ուսուցման գործընթացը, նրանք սկսում են դասընթացը դիտարկել որպես մի երևույթ, որը պետք է ուսումնասիրել և յուրացնել այնքան խորությամբ, որ դրա արդյունքում ստացված գիտելիքները հետագայում ևս հնարավոր լինի կիրառել։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարված հետազոտական աշխատանքը կարող եմ ասել, որ ուսումնական գործընթացը փոփոխական է, ուստի այն վերահսկող գնահատման գործիքները ևս փոփոխվող են դրանցից է նաև հետադարձ կապը,որը ժանակ առ ժամանկ պետք է վերանայվի և համալրվի ժամանակին և արտահրավերներին համահունչ մոտեցումներով:

- Հետադարձ կապը սովորողի ուսումնառության ընթացքում ժամանակին և հնարավորինս ճիշտ է բնութագրում նրա ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև պարունակում է սովորողի հետագա զարգացումն ապահովող առաջարկություններ:
- Ողջ դասի ընթացքում, որպես կանոն, սովորողը ստանում է գրավոր կամ բանավոր հետադարձ կապ իր առարկայական գիտելիքների և հմտությունների, բացթողումների ու ձեռքբերումների մասին: Երբ սովորողն ընդգրկվում է իր և համադասարանցիների գնահատման գործընթացի մեջ, նրա մոտ կարող են զարգանալ նպատակ ներդնելու և դրանց հասնելու հմտություններ:
- Սովորողի առաջադիմությունը մեծապես աճում է, երբ փոխվում է աշակերտի մոտեցումն ու ընկալումը դասընթացի վերաբերյալ, մասնավորապես, երբ դասընթացը սկսվում է դիտարկվել ոչ թե գնահատական ստանալու միջոց, այլ գիտելիքներ ձեռք բերելու և դրանք ապագայում կիրառելու լավագույն հնարավորություն:
- Ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր դրական և արդյունավետ դրսևորումները, սակայն դրանցից յուրաքանչյուրի կիրառմանը զուգահեռ հետադարձ կապի կիրարկումը մեծապես կբարձրացնի սովորողի առաջադիմությունը ապահովելով առավել կրթված, բանիմաց և խելամիտ անհատների առկայություն:

Ոչ բոլոր արհեստավարժ ուսուցիչներին է տրված տեսնել իրենց աշակերտների թեկուզ աննշան հաջողություններն ու աջակցել նրանց: Չէ՞ որ հեշտ է սեփական հարուստ փորձի բարձունքից նկատել սովորողի սխալները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бахтиярова А. Ж., учитель английского языка Муссина А. К., учитель биологии Групповая работа как эффективная форма организации урока в условиях повышения качества образования и воспитания ГУ «СОСШПА№7 г. Павлодара»

2. Л. В. Гикал Групповая работа как эффективная форма организации урока 2008 / 2009.

3. Sutton Trust 2014. What makes good teaching.

4. Ա. Հովհաննիսյան և այլոք(2006).*Համագործակցային ուսուցում.Երևան,Անտարես հրատ.*

5. Կ. Ավետիսյան և ուրիշներ,Քիմիայի դասավանդումը հանրակրթական դպրոցում, Երևան, Անտարես հրատ. 2010.

6 Բալայան Ա., Հետադարձ կապ,Երևան, 2021

Հետադարձ կապ (ՁԳ) (kznakgnahatum.blogspot.com)

7 Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն և մեխանիզմներ, Երևան, 2015,

8 Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ, /խառը, համակցված ուսուցման համար/, «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի որակի ապահովման բաժին։